ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

17.09.2021թ.
Ժամը 14[30]

Ընդունել ի գիտություն, որ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ընթացակարգի հայտերի բացումն իրականացվել է 16-ը սեպտեմբերի 2021թ. ժամը 11[00]-ին ՝ Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով: Հանձնաժողովը մասնակիցների կողմից ներկայացված հայտերն ուսումնասիրելուց հետո շարունակեց աշխատանքները:

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու(ԳԱՊ)՝

ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԿ ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի պետ Ա. Նազարյանը,

գնահատողներ՝

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի պետ բ/ծ գնդապետ Կ. Խաչունցը,

ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչության ԹԱ վարչության ապահովման 1-ին բաժնի գլխավոր մասնագետ Հ. Ավետիսյանը,

ՀՀ ՋՈՒ ՌԲ վարչության ՆՏԱ բաժնի սպա բ/ծ մայոր Մ. Գալստյանը,

Գնումները համակարգող

ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչության ԳԿ 3-րդ բաժնի գլխավոր մասնագետ, Լ. Թազայան

«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Լ. Թազայան)

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.
3. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.
4. Ներկայացված գնային առաջարկների հիման վրա «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.
5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4 դեմ՝ 0:

1. Տեղեկություններ www.armeps.am կայքում էլեկտրոնային հայտ ներկայացրած մասնակիցների մասին.

(Լ. Թազայան)

1.1 ՀՀ ՊՆ կարիքների համար **«Բժշկական սարքի»** ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ընթացակարգին սահմանված ժամկետում էլեկտրոնային հայտ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Մասնակիցների անվանումը
1.	Դավիթ Թումանյան Գագիկի ԱՁ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

(Լ. Թազայան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ է ներկայացրել հետևյալ մասնակիցը.

Հ/հ	Գնման առարկա	Չ/մ	Քանակը	Նախահաշվային գումարը	Մրցույթին մասնակցող կազմակերպությունների				
					Հ/հ	Անվանումները	Գնային առաջարկ /ՀՀ դրամ/		
							Արժեք	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	Սեղանի վրա դրվող ցենտրիֆուգ	հատ	10	9,600,000	1	Դավիթ Թումանյան Գագիկի ԱՁ	7,125,000	1,425,000	8,550,000

2.2 Մասնակցի գնային առաջարկի հաշվարկման ճշտությունը (հայտով ներկայացված գնային առաջարկի թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը), ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունը համապատասխանում են (ճիշտ են):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ԳՀ ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմած լինելու մասին.

(Լ. Թազայան)

3.1 Մասնակցի էլեկտրոնային հայտը էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի կողմից համարվել է հետագա գնահատման համար ընդունելի:

3.2 Մասնակցի էլեկտրոնային հայտում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են:

3.3 Մասնակցի հայտով ներկայացրած փաստաթղթերը համապատասխանում են «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ հետևյալ դեպքի՝

Սեղանի վրա դրվող ցենտրիֆուգ ապրանքատեսակի մասով Դավիթ Թումանյան Գագիկի ԱՁ-ի կողմից հայտով ներկայացված՝ գնանշման հարցմանը մասնակցելու առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1)-ում, «արտադրողի անվանումը» սյունակում, բացակայում է առաջարկվող ապրանքի արտադրողի անվանման մասին տեղեկատվությունը, բացի այդ՝ «մակնիշը» սյունակում նշված է «սեղանի վրա դրվող ցեբտրիֆուգ», այնինչ անհրաժեշտ է նշել ընթացակարգի հրավերով պահանջվող՝ առաջարկվող ապրանքի մակնիշի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև «տեխնիկական բնութագիրը» սյունակում նշված «Կափարիչի փակումը՝ էլեկտրական կամ մեխանիկական, որը արգելափակում է աշխատանքի ընթացքում կափարիչի բացելու հնարավորությունը» հատվածում անհրաժեշտ է հստակեցնել մասնակցի կողմից առաջարկվող ապրանքը՝ բացառելով «կամ» բառը:

3.4 Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 17.09.2021թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, իսկ գնահատող հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցեց վերոնշյալ մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

3.5 **24.09.2021**թ.-ին կայացած նիստում գնահատող հանձնաժողովն արձանագրեց, որ Դավիթ Թումանյան Գագիկի ԱՁ-ի կողմից արձանագրված անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել է, սակայն գնահատող հանձնաժողովը, ուսումնասիրելով առաջարկվող ապրանքի շտկված տեխնիկական բնութագիրը, արձանագրել է, որ տվյալ փաստաթղթում բացակայում է տույն ընթացակարգի հրավերով պահանջվող և ի սկզբանե մասնակցի հայտով ներկայացված տեղեկատվությունը, մասնավորապես՝ ներկայացված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում (Հավելված N1.1) «տեխնիկական բնութագիրը» սյունակում բացակայում էր ապրանքատեսակի մասով ընթացակարգի հրավերով պահանջված տեխնիկական բնութագրի մաս կազմող «*Անհավասարակշռության հայտնաբերման և անջատման համակարգի առկայության ինչպես նաև ծրագրավորված և վահանակի միջոցով արժեքների անընդհատ ցուցադրման*» մասին տեղեկատվությունը, ինչը չէր համապատասխանում հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Հաշվի առնելով այն, որ մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները կրկնակի շտկելու հնարավորություն գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ, ուստի հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց Թումանյան Գագիկի ԱՁ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին անբավարար և մերժել վերջինիս հայտը:

23.09.2021թ. Թումանյան Գագիկի ԱՁ-ի կողմից գնումների համակարգողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը (Հավելված N1.1) չքննարկվեց, քանի որ այն ներկայացվել էր օրենսդրությամբ սահմանված ժամկետի խախտմամբ:

3.7 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը՝ Թումանյան Գագիկի ԱՁ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր կուղարկվի լիազորված մարմին:

3.8 Գնահատող հանձնաժողովը որոշեց ընթացակարգը հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Տեղեկություններ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Լ. Թազայան)

5.1 «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-9/33» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

6. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ:

(Լ. Թազայան)

6.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ)	Ա. Նազարյան
Գնահատող	Հ. Խաչունց
Գնահատող	Հ. Ավետիսյան
Գնահատող	Մ. Գալստյան
Գնումները համակարգող	Լ. Թազայան